ISSN 1829-0469 24007 9 771829 046005
ISSN 1829-0469 24008 9 771829 046005
ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (223-224)

#7-8 հուլիս-օգոստոս 2024

Կայացավ խմբավար, երաժշտագետ, մանկավարժ Գրիգոր Հարությունյանի գրքերի շնորհանդեսը

ԱՀԹ Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ելույթը

Գրիգոր Հարությունյան

2

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտներին հանձնվեցին դիպլոմները

ԵՊԿ ռեկտորի պրոռեկտոր Ծովինար Մովսիսյան

ԵՊԿ 2023-2024 թթ. ուսումնական տարվա շրջանավարտները

3

Յուրի Դավթյանի ծննդյան 95-ամյակին նվիրված համերգ

6

Կոնսպանտին Պետրոսյան, կազմակերպիչ Շուշանիկ Բրուտյան, Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական պետական քոլեջի դասախոսներ և ուսանողներ

Կոնսպանտին Պետրոսյանի «Երգերի ընտրանի» գրքի համերգ-շնորհանդեսը

8

Մանուկների շուրթերից պետք է հնչի մանկականը

Համիկ Հարությունյան

4

Կայացավ կոմպոզիտոր Նարինե Զարիֆյանի հոբելյանական երեկոն

Ծովինար Մովսիսյան, Նարինե Զարիֆյան

7

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





Ա. Հովհաննիսյան, Ծ. Մովսիսյան, Ա. Բոյաջյան, Ն. Բաղդասարյան, Մ. Կոկժան, Ռ. Ստեփանյան

Լուսանկարները՝ Մանե Բաղդասարյանի, Միլենա Զայյանի

Կայացավ խմբավար, երաժշտագետ, մանկավարժ Գրիգոր Հարությունյանի գրքերի շնորհանդեսը

1

Նյու-Յորքի «Պայքար» շաբաթաթերթում հրատարակվել է Գրիգոր Հարությունյանի գրքերի շնորհանդեսի մասին Կոնստանտին Պետրոսյանի անդրադարձը:

ՊԱՅՔԱՐ
Շաբաթաթերթ

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ, ՄԱՆԿԱՎԱՐԺ ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԳԻՐՔԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

Օգոստոս 22-ին Արարատեան Հայրապետական թեմի Առաջնորդարանում հանդիսապետութեամբ ԱՀԹ Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նաւասարդ արքեպիսկոպոս Կճոյեանի տեղի ունեցաւ խմբավար, երաժշտագէտ, մանկավարժ Գրիգոր Յարութիւնեանի 3 գրքերի շնորհանդէսը: Գրքերից 2-ը՝ «Ստեղծող մանկանց», «Տաղք Տաղաւարաց» հոգեւոր երգասացութիւնների մշակումներ են ձայնի եւ երգչախմբի համար, իսկ միւսը՝ «Խմբերգային պարտիտուրի վերադաշնակում», ուսումնական ձեռնարկ է՝ գրուած միջին մասնագիտական եւ բարձրագոյն երաժշտական ուսումնական հաստատութիւնների դասընթացի կազմակերպման համար:

Շնորհանդէսը իրենց ներկայութեամբ պատուել էին ՀԿՄ արտասահմանեան յանձնախմբի համանախագահ Կոնստանտին Պետրոսեանը, Հայաստանի Երաժշտական Ընկերութեան նախագահ Դաւիթ Ղազարեանը, ՀՀ ԳԱԱ Արուեստի ինստիտուտի տնօրէն արուեստագիտութեան դոկտոր, փրոֆէսոր Աննա Ասատրեանը, Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան նախագահ Արամ Սաթեանը, Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայի ռեկտորի պաշտօնակատար Ծովինար Մովսիսեանը, ՀՀ ժողովրդական արտիստ, դաշնակահար Սվետլանա Նաւասարդեանը, Սայաթ-Նովա աշուղական անսամբլի գեղարուեստական ղեկավար Թովմաս Պօղոսեանը, երաժշտագէտներ, խմբավարներ, կոմպոզիտորներ, մտաւորականներ:

Երեկոյի ընթացքում մեներգիչների եւ երգչախմբերի կատարմամբ հնչեցին հայ հոգեւոր երգասացութիւնների մշակումներ՝ կատարուած Գրիգոր Յարութիւնեանի կողմից:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Երաժշտական անցուդարձը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

2024 թ., հունիսի 30-ին, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ Նարեկացի արվեստի միության Նարեկացի նվագախմբի համերգը, որն անցկացվեց ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի «Ժամանակակից կոմպոզիտորները և կատարողները Գյումրիում» ծրագրի շրջանակներում: Այս ծրագրի բուն նպատակն էր հանդիպումը Նարեկացի նվագախմբի գեղարվեստական ղեկավար Արտեմ Խաչատուրի հետ, որը ծրագրի հեղինակ, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի դոցենտ Բելա Հովհաննիսյանի մտահղացմամբ փոխակերպվեց նվագախմբի և կոնսերվատորիայի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի ուսանողների հետ համատեղ համերգի: Երաժշտագետ Նվարդ Եղոյանի հարցազրույցն անվանի երաժիշտ, հայ ավանդական երաժշտության հմուտ գիտակ Արտեմ Խաչատուրի հետ ընդմիջվեցին հայ աշուղական երգերի կատարումներով: Հանդիպումը խիստ ճանաչողական էր՝ հայ ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրների և դրանց լուծումների մասին արժեքավոր դիտարկումների շնորհիվ:

Բուհի տնօրինության կողմից Արտեմ Խաչատուրը և Նարեկացի արվեստի միության հիմնադիր նախագահ, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի մեծ բարեկամ Նարեկ Հարությունյանն արժանացան շնորհակալագրերի՝ երախտագիտության և հետագա համագործակցության ակնակալիքներով: Ինչպես նշել է ծրագրի հեղինակ Բելա Հովհաննիսյանը. *«Այո,՛ ճանապարհը հարթ չէ, բայց ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի տնօրեն տիկին Հասմիկ Հարությունյանի նվիրված, միասնական ջանքերի շնորհիվ կարողանում ենք իրականություն դարձնել: Ծրագիրը չէր կարող երկարել, եթե չաջակցեր Նարեկացի արվեստի միությունը, հանձինս Նարեկացի արվեստի միության նախագահ՝ պարոն Նարեկ Հարությունյանի և տնօրեն տիկին Գայանե Խաչատրյանի հոգածության, ինչպես տիկին Հարությունյանն է նշում այս ծրագրի բացառիկ բարեկամն ու գործընկերը, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Այս ամենի նպատակն է նպաստել սերունդների կրթմանը, նրանց մրահորիզոնի ընդլայնմանը, ճանաչողական, շփման, ուսումնակրթական մակարդակի բարձրացմանը, գիտելիքների արդիականացմանը և արվեստագետ-մարդ ձևավորելուն: Ստեղծել մի ազատ հարթակ, որտեղ կարելի է սովորել, ազատ հաղորդակից լինել երաժշտական արվեստում կայացած և իրենց ավանդը ներդրած արվեստագետների հետ»:*

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ
https://www.facebook.com/bela.hovhannisyan.5
https://www.facebook.com/gyumriconservatory

Արտեմ Խաչատուր, Նվարդ Եղոյան

Հասմիկ Հարությունյան, Նարեկ Հարությունյան

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտներին հանձնվեցին դիպլոմները

ԵՊԿ դասախոսները և 2023-2024 թթ. ուսումնական տարվա շրջանավարտները

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, հուլիսի 11-ին հանձնվեցին շրջանավարտների դիպլոմները:

«Ունենք հրաշալի ներուժ և շրջանավարտներ, ովքեր բարձր կպահեն կոնսերվատորիայի համբավը, պատիվը: Հանդես գալով տարբեր բեմերում, միշտ հոգում ունենալով ոչ միայն կվայլ մասնագիտության ղեկավարի անունը, ավանդույթը, այլ նաև այս շենքի, բուհ-ի՝ ձեր կյանքի վառ հիշատակը...Մաղթում եմ մեծ բեմեր, մեծ հաջողություն և անձնական երջանկություն», – ասաց ռեկտորի պաշտոնակատար Ծովինար Մովսիսյանը:

2023-2024 ուսումնական ամբողջ տարին նախորդ հնգամյակի հետ միասին անցավ Սոնա Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Այդ օրը նա իր խոսքն անձամբ ուղղեց շրջանավարտներին՝ *«Հուսով եմ այն դժվարություններով, որ անցան մեր երկիրն ու բուհը օգտակար են լինելու ավելի, քան՝ հակառակը: Այսօրյա կոնսերվատորիայի ղեկավարության սկզբունքայնությունը, ամրությունն ու դիմակայությունն ինձ համար անկասկած ու աներկբա են: Երբեք թույլ չտաք ավելորդ ու թույլ խոսակցությունների՝ կապված կոնսերվատորիայի կարգավիճակի, վարկի ու հրաշալի շենքի հետ: Դրանք գոնե այսօրվա դրությամբ միանգամայն կեղծ են և անպարտեհ: Ամուր լինենք և անկասկած, մենք շատ ավելի արժանավայել ժամանակներ ենք ապրելու: Ցանկանում եմ ստեղծագործական, կատարողական պրոֆեսիոնալ ապրիճաններ, որոնք յուրաքանչյուրիդ բավարարվածություն կբերեն: Իսկական հաղթանակներ ու որակյալ ու բնական հաջողություններ ունենաք և որ ամենակարևորն է՝ արժանի լինեք, որովհետև միայն արժանիներին է տրվում հաջողությունը, ստեղծագործական բերկրանքն ու հաջողությունը»:*

Բարեմաղթանքներ ուղղեցին նաև ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը, ուսումնական մասի վարիչ Նոնա Ոսկանյանը և ռեկտորատի ներկայացուցիչները:

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում տեղի ունեցավ շրջանավարտներին դիպլոմներ հանձնելու արարողությունը

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ռեկտոր Հասմիկ Հարությունյանը դիպլոմներ է հանձնում շրջանավարտներին

Սույն թվականի օգոստոսի 27-ին, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի փոքր դահլիճում տեղի ունեցավ 2023-2024 թթ. ուսումնական տարվա շրջանավարտներին դիպլոմների հանձնման արարողությունը:

https://www.facebook.com/gyumriconservatory

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի դասախոսները և 2023-2024 թթ. ուսումնական տարվա շրջանավարտները

Մանուկների շուրթերից պերք է ինչի մանկականը

Կոմպոզիտորի, պրոֆեսիոնալ երաժշտի առաքելությունը կարելի է դիտարկել որպես երաժշտական աշխարհի միջով նավարկող մի յուրահատուկ ճանապարհորդություն՝ լի ստեղծագործական արկածներով, հոգևոր փնտրտուքներով և հասարակական ներդրումներով: Իմ կարծիքով կոմպոզիտորը հասարակության լուռ ղեսպանն է, ով իր երաժշտությամբ միավորում է մարդկանց և կամրջում մշակույթները:

Հասմիկ Հարությունյան

Ինչպես ասել է XIX դարի իտալացի գրականագետ Վինչենցո Ջոբերտին. *«Աշխատել՝ նշանակում է ստեղծել, իսկ ստեղծագործությունը միակ խոր, իրական ուրախությունն է, որը մարդ կարող է ճաշակել այս կյանքում»:* Իր համառ աշխատանքով և դրա արդյունքում ծնված գեղեցիկ ու յուրատիպ ստեղծագործություններով է հանդես գալիս ամերիկաբնակ երիտասարդ հայ կոմպոզիտոր Հասմիկ Հարությունյանը: Ապրելով և ստեղծագործելով ԱՄՆ-ում կոմպոզիտորը ծավալում է մասնագիտական ակտիվ գործունեություն, ներկայացնելով հայկական երաժշտական մշակույթը միջազգային ասպարեզում:

Հ. Հարությունյանը (ծնվ. 1984 թ., Երևանում), սովորել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. պետական երաժշտական քոլեջի երաժշտության տեսության բաժնում (1998-2002 թթ.), այնուհետև ուսումը շարունակել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում (2002-2007 թթ.), պրոֆեսոր Արամ Սաթյանի դասարանում: 2005-2021 թթ. աշխատել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական պետական քոլեջում, որպես դասախոս, այնուհետև՝ տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ: 2008-2019 թթ. աշխատել է Երևանի Հայկանուշ Դանիելյանի անվ. արվեստի դպրոցում՝ որպես կոմպոզիցիայի ուսուցչուհի:

Հ. Հարությունյանն ստեղծագործում է տարբեր ժանրերում, սակայն առաջնությունը տալիս է մանկական և պատանեկան ստեղծագործություններին: Կոմպոզիտորի համոզմամբ. *«Երեխաները պերք է կարարեն և լսեն ստեղծագործություններ, որոնք գրված են հատուկ իրենց համար: Սա է իմ ստեղծագործական կարգախոսը: Մանուկների շուրթերից պերք է ինչի մանկականը»:* Հ. Հարությունյանի ստեղծագործությունները, մասնավորապես երեխաների համար գրված երկերը, աչքի են ընկնում բնորոշ անկեղծությամբ, ջերմությամբ և արտահայտման ինքնատիպությամբ: Ինչպես նշել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, պրոֆեսոր, կոմպոզիտոր Արամ Սաթյանը. *«Պերք է նշեմ, որ մանկական երգը հեշտ չի ծնվում, այնուամենայնիվ իր ստեղծագործություններով Հասմիկը կարողանում է ստեղծել մանուկների աշխարհը: Նրա կերտած սեփական ձեռագիրը հազարավոր երեխաների համար վառ ու գունեղ պատմություն է դարձել: Դրա վառ ապացույցը Հասմիկի երգերի բազմաթիվ կատարումներն ու մրցանակներն են, ինչպես Հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այսօր էլ, գտնվելով Հայրենիքից հեռու, կոմպոզիտորը շարունակում է իր ստեղծագործական գործունեությունը ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգում, իր գործունեությամբ կատարելով ազգանվեր աշխատանք: Իր արվեստով նա Սիդնեյում գտնվող մանուկներին կարողանում է փոխանցել Հայրենիքի շունչը»:* Այդ ժանրում կոմպոզիտորի բազմաթիվ ստեղծագործություններ ծնվել են «Արևիկ» (այժմ «Արևներ») Արմեն Դիվանյանի անվ. մանկապատանեկան անսամբլի հետ՝ ղեկավար Արփինե Հովհաննիսյան, համագործակցության արդյունքում: *«Հասմիկ Հարությունյանի հետ համագործակցում եմ սկսած 2005 թ.: Նա այն եզակի կոմպոզիտորներից է, ով կարողանում է ներթափանցել մանուկների ներաշխարհը և տեսնել իրականությունը մանկան աչքերով: Նրա ստեղծագործությունները մշտապես գրավել են բարձր հորիզոնականներ թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս: Այժմ էլ, լինելով Հայրենիքից այդքան հեռու, Հասմիկը շարունակում է ստեղծագործել և համագործակցել «Արևների» հետ: Համագործակցության վառ արդյունքը 2024 թ., միջազգային մի շարք մրցույթներում 1-ին պատվավոր հորիզոնականներն են»,* - նշել է անսամբլի ղեկավար Արփինե Հովհաննիսյանը: Այդ առումով նշենք, որ վերջերս մասնակցելով *«Monolit festival»* արվեստի միջազգային առցանց մրցույթ-փառատոնին, Հ. Հարությունյանն արժանացել է առաջին կարգի մրցանակների և հրավիրվել Իսպանիա, որտեղ կատարվելու է նրա ստեղծագործությունը: Կոմպոզիտորը ներկայացել է թվով 10 մրցույթի (նույն մրցույթ-փառատոնի շրջանակներում), որոնք անցկացվել են՝ Ամերիկայում *(«American Charm»)*, Ֆրանսիայում *(«Art Marathon In France»)*, Գերմանիայում *(Art Marathon In Germany)*, Հունաստանում *(«Art Marathon In Greece»)*, Ավստրալիայում *(«Under The Skies Of Australia»)*, Իսպանիայում *(«Paints Of The Spanish»)*, Անգլիայում *(«Welcome To England»)*, Արգենտինայում *(«Argentine Gahering»)*, Իտալիայում *(«Art marathon in Italy»)* և Կանադայում *(«Welcome to Canada»)*:

Կոմպոզիտորը մրցույթներում ներկայացրել է մանկական և պատանեկան երգեր՝ «Արևներ» մանկապատանեկան անսամբլի կատարմամբ, որոնք բարձր գնահատականի են արժանացել հանձնախմբի անդամների կողմից: Հ. Հարությունյանի «Իմ քաղաք» երգի մասին դրական արձագանքելով հանձնախմբի անդամները նշել են. *«Քանի որ մենք գնահատել ենք մասնակցությունը միայն որպես կոմպոզիտոր, մենք բարձր ենք գնահատել այս աշխատանքը: Այն լավն էր և պրոֆեսիոնալ: Տեսանելի է, որ ստեղծման ընթացքում հաշվի է առնվել նաև կատարողի տարիքը: Շնորհավորում ենք գերազանց աշխատանքի կապակցությամբ»:*

Որպես կոմպոզիտոր, Հ. Հարությունյանն ակտիվորեն համագործակցում է տարբեր մշակութային օջախների, կազմակերպությունների հետ, ներգրավված է մի շարք միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում, որոնք ուղղված են հայ երաժշտության տարածմանն ու զարգացմանը: Կոմպոզիտորի հետ զրույցից տեղեկացանք նրա մասնագիտական համագործակցության շրջանակների մասին. 2022 թ. համագործակցել է Պետրոսյան թատերական պարային ընկերության հիմնադիր, տնօրեն և գործադիր տնօրեն Նարինե Պետրոսյանի հետ, «Եվս մեկ անգամ Շառլ Ազնավուր» համերգային ծրագրի շրջանակներում՝ կատարելով պարային համարների մի շարք մշակումներ: 2023 թ. համագործակցել է հայկական երգչախմբային դիրիժորների ասոցիացիայի (ղեկավար՝ «Հայկյան» երգչախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և խմբավար Գայանե Բաղդասարյան) հետ՝ խթանելով երգչախմբային արվեստի զարգացմանը, նոր կատարողական մոտեցումներին և ներգրավելով երիտասարդ տաղանդների: Գայանե Բաղդասարյանի խոսքով. *«Հասմիկի ներդրումը մեր երգչախմբային արվեստի զարգացման մեջ անգնահատելի է: Նրա նորարարական մոտեցումն ու ստեղծագործական էներգիան ստեղծում են նոր հորիզոններ: Նրա ստեղծագործական գործունեությունը զգալիորեն նպաստում է մեր երգչախմբի միջազգային ճանաչմանը և բացում նոր հնարավորություններ համագործակցության համար»:* Համագործակցում է «Հայ Արտ» մանկապատանեական խմբի հետ՝ Նեկտարինե Չիլյանի ղեկավարությամբ, ստեղծելով երգեր և ակտիվ մասնակցելով համատեղ համերգներին: Կոմպոզիտորի խոսքով. *«Այս համագործակցությունն ինձ հնարավորություն է տալիս կիրառել իմ ստեղծագործական ներուժը երիտասարդ սերնդի կրթության և զարգացման նպատակով: Համատեղ մասնակցել ենք «Երեխաների միջազգային օրվան նվիրված» հունիսի 1-ին, 2024 թ. կայացած համերգին, որտեղ իմ ներդրումն արժանացել է պատվոգրի՝ համերգի մասնակիցների կողմից»:* Վերին երկու տարիների ընթացքում, լինելով Հայ-Ամերիկյան արվեստագետների ասոցիացիայի (ՀԱԱԱ) կոմպոզիտորների միության ղեկավար, կազմակերպել է մի շարք միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են եղել հայ և ամերիկյան մշակութային կապերի ամրապնդմանը: Այս բոլոր միջոցառումների համար գրել է երաժշտություն և կատարել տարբեր մշակումներ, որի համար 2023 թ. արժանացել է ՀԱԱԱ-ի նախագահի՝ Գարեգին Քարագյանի, հատուկ շնորհակալագրին՝ երաժշտության բնագավառում մեծ ներդրման և նվիրվածության համար:

Կոմպոզիտորը համագործակցում է «Համազգային Արևմտյան ԱՄՆ Նաիրյան» երգչախմբի հետ (ղեկավար՝ Լուսինե Մելիքսեթյան), կազմակերպելով համատեղ համերգներ և միջոցառումներ, ինչպես նաև գրել է երգեր և կատարել տարբեր մշակումներ հատուկ երգչախմբի համար, ինչի համար պարգևատրվել է Գերազանցության վկայականով երգչախմբային ժանրում արժեքավոր ներդրման համար:

Համագործակցում է «Երաժշտությունը հանուն միասնության» կազմակերպության հետ (ղեկավար՝ Շուշանա Հակոբյան): Համերգային գործունեությունից բացի, կոմպոզիտորի մի շարք ստեղծագործություններ ընդգրկվել են երիտասարդ կատարողների համերգացանկերում, ինչը նպաստում է նոր սերնդի երաժիշտների զարգացմանը և ճանաչմանը:

Հ. Հարությունյանն համագործակցում է նաև ԱՄՆ-ի Հայ Առաքելական Եկեղեցու Արևմտյան Առաջնորդարանի, մասնավորապես համերգային ծրագրերի գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ, օպերային երգիչ (տենոր) Պերճ Քարագյանի հետ: Համագործակցում է *AGBU* Փասադենայի Լոս Անջելեսի երգչախմբի (ղեկավար Նեկտար Միրաքյան), ինչպես նաև Գլենդելի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, «Ջանգակատուն» սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր, Լոս Անջելեսի «Կալիֆոռնիայի հայ երիտասարդաց միության» երգչախմբի ղեկավար Միքայել Ավետիսյանի հետ՝ ներկայացնելով հայ ազգային մշակույթը ԱՄՆ-ում և նպաստելով հայ-ամերիկյան մշակութային կապերի ամրապնդմանը: Համատեղ կազմակերպվում են համերգներ, կրթական ծրագրեր և մշակութային միջոցառումներ, որոնք նպատակ ունեն պահպանել և զարգացնել հայ երաժշտական ժառանգությունը, ինչպես նաև ստեղծել նոր և հետաքրքիր նախագծեր, որոնք կամրապնդեն հայ-ամերիկյան մշակութային կապերը: ԱՄՆ-ի *NACUSALA (National Association of Composers)* Կոմպոզիտորների Ազգային Ասոցացիայի անդամ է:

Այն հարցին, թե երաժիշտների ինքնադրսևորման համար ինչ պայմաններ կան Ամերիկայի երաժշտական կյանքում, որը չկա Հայաստանում, կոմպոզիտորը պատասխանել է. *«Ամերիկայում երաժշտության պրոֆեսիոնալ մակարդակը շատ բարձր*

Կոմիտասի գրառած օրորերգերը ներկայացվեցին զույգ համերգով

Մագդա Մկրտչյան

Ամեն օր, ամեն ժամ մենք դեմքով դառնում ենք դեպի Կոմիտասը. նրա՝ սերունդներին թողած ժառանգությունը դեռևս խորն ու մանրակրկիտ ուսումնասիրության և, համապատասխանաբար, ներկայացման կարիք ունի, անհայտ և կամ պակաս քննված էջեր կան, որոնք դեպի մեր ազգային ակունքներին «դարձի» ուղիղ ճանապարհն են: Այդ ճանապարհին քայլերից մեկն էլ վերջերս երկու համերգներով Կոմիտասի գրառած տասներկու օրորոցայինների համերգային կատարումներն էին, նախ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) Հայաստանի դահլիճում, ապա և՝ Գաֆէսճեան արվեստի կենտրոնում: «Պատմական Հայաստանի օրորներ» խորագրով համերգներին ՀՀ վաստակավոր արտիստ, սոպրանո Մագդա Մկրտչյանի կատարումները հնարավորինս հարազատ էին ժողովրդի երգեցողության ինքնուրույն դպրոցին, որի մասին ժամանակին խոսել է Կոմիտասը: Ամիսներ առաջ էր, որ երգչուհին, ժողովրդական օրորերգերի իր պեղումների արդյունքում ձայնագրած խտասալիկը համերգով ներկայացրեց Ա.Սպենդիարյանի հանդիսությունների սրահում. հենց այդ օրն էլ բարձրաձայնեց հաջորդիվ կոմիտասյան օրորոցայիններին անդրադառնալու և նոր ձայնագրություններ կատարելու իր մտադրությունը: Հավատարիմ իր խոստմանը՝ հիմա բացառապես երգեց Կոմիտասի գրառած և դրա շնորհիվ մեզ հասած նանիկները: Երբ համերգից հետո ուզում էի այդ օրորոցայինների ընդհանրական գնահատակը ձևակերպել, մտաբերեցի հենց Կոմիտասի մի բնորոշումը, որից առավել ճշգրիտ հնարավոր չէ տալ տվյալ պարագայում: Կոմիտասը ժողովրդական երգը, ուրեմն և՝ դրանց մաս կազմող օրորերգերը ընդունում էր իրենց պատմական զարգացման մեջ: Դրանք, Կոմիտասի խոսքերով ասած, ինչպես գեղարվեստի ամեն ճյուղ, ունեցել են իրենց մանկության, հասունության և լրիվ զարգացման ընթացքը: Այդ ընթացքի արտահայտություններն էին այն եղանակները, որոնք կատարեց Մագդա Մկրտչյանը: Դրանց, ոնց դարձյալ Կոմիտասն է բնորոշել, բնական էին, պարզ, քանի որ իրենց ծագմամբ «բնական, բոպեական» արտահայտություններ են: Օպերային երգչուհի լինելով՝ Մ. Մկրտչյանն իր հայացքն ուղղել է դեպի ժողովրդականը՝ հետևելով կոմիտասյան պատգամին. *«Ապագա երաժշտության ուսումնասիրության հիմքը պետք է դառնա ժողովրդական երաժշտությունը»:*

Մագդա Մկրտչյանի կատարած տասներկու օրորոցայիններից մի քանիսը չունեն խոսքեր, բայց մայրական քնքշանքի, առանձնահատուկ զգացմունքի այնպիսի արտահայտություններ են, որ ունկնդրին առանց հուշելու էլ հասկանալի է դրանց նշանակությունն ու բնույթը: Մի քանի օրորներ, անգամ, վերնագրված չեն, պարզապես համարակալված են, ասենք «Օրոր N° 2», «Օրոր N° 3» և այլն: Խոսուն, բնության երևույթներին արձագանքող, պահի տպավորությամբ ծնված խոսքերից առնված տողեր են մնացած երգերի վերնագրերը՝ «Բախչա ունիմ, բար չունիմ», «Աղվոր ես, չունիս խալատ», «Քամին կփչե հարավ», «Քուն եղիր, բալա՛», «Հոյ լա, սնավոր տուն», «Օրորդ ըլնիմ»...

«Կոմիտասի գրառած օրորոցայիններից մի քանիսը խոսքեր չունեն. անհայտ է՝ դրանք իրականում խոսքեր ունեցե՞լ են, թե՞ ոչ, գուցե թե ձայնով արդեն հայ մայրն իր սերն է հաղորդել, և խոսքեր պետք չեն եղել՝ իր գորովն արտահայտելու, – ասում է Մագդա Մկրտչյանը: – *Բայց և գուցե հնագույն ժամանակներից եկած երգի խոսքերն, ուղղակի, չեն հասել մինչև Կոմիտասի ապրած ժամանակները: Եվ ես համարձակություն ստացա՝ դրանցից մեկը խոսքերով երգել, որ գրվել են վերջերս: Իմ առաջարկով բանաստեղծուհի Հասմիկ Սարգսյանը խոսքեր գրեց կոմիտասյան մի օրորոցայինի համար, և այն հանդիսասանի դատին հանձնեցի համերգներից մեկին՝ կատարման ժամանակ առաջին հատվածում՝ խոսքով, երկրորդ հատվածում՝ զուտ կոմիտասյան գրառմամբ:*

Ձվարթունք ժպտին
Շուրջն օրոցքիդ,
Կրծքիս կսեղմեմ
Շնչիկդ եղեմ:

Սիրով պտղեցի,
Բալիս բերեցի...
Մանուկս քնի,
Բարուր դրախտ ի...

Հանդիսականն իմ կատարումը խիստ ջերմ ընդունեց, և ես դա համարում եմ իմ հաջողությունը:

Ի դեպ, բուժիչ են մեր օրորները, և այնպիսի նրբերանգներ եմ հաղորդել, որ աննկատ հարստացնում են երգերը, ճաշակով են և մարդ «հալեցնող», – շարունակում է երգչուհին: – *Դրանք մաժորային են, ուրախ, երբեմն՝ մեղմ, դանդաղ: Շատերը սիրեցին դը-բանք. երբեմն հանդիսականը ինքնաբուխ միանում էր իմ երգեցողությանը, արտասվում, հուզվում, զգում էի, որ ինձ հաջողվել է իրենց կտրել իրականությունից, նյութականությունից, հոգեմաքրում էր: Ուստի և գաղափար կա համերգը կրկնելու: Աշխարհին մոր, կնոջ էներգետիկան է պակասում: Կինը երեխա է լույս աշխարհ բերում, կյանք է արարում, աշխարհը մարդկությամբ ու մարդկայնությամբ լցնում, իսկ պատերազմներին, ավերումին վերջ չկա»:*

Համերգի մասնակիցներ

Արմինե Ամալյան, Մագդա Մկրտչյան, Նունե Մելիք-Վրթանեսյան

Մագդա Մկրտչյանի՝ կոմիտասյան օրորերգերի երկու համերգներին առանձին կատարումներով միացան և անհատական առանձին երգավորումներ հաղորդեցին սոպրանո Արմինե Ամալյանը, սոպրանո Մելինե Նաջարյանը, մեծո-սոպրանո Լիլիթ Հակոբյանը և Ա. Ցիցիկյանի անվ. երաժշտական դպրոցի սաները՝ նվագակցությամբ դաշնակահարներ Նունե Մելիք-Վրթանեսյանի և Ռուզաննա Բաբայանի:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրող

Մանուկների շուրթերից պետք է հնչի մանկականը

4 է՝ շնորհիվ մեծ շուկայի, առաջատար կրթական հաստատությունների, տեխնոլոգիական զարգացումների և բազմազանության: Երաժիշտներն ունեն բազմաթիվ հնարավորություններ՝ իրենց կարիերան զարգացնելու, միջազգային ճանաչում ձեռք բերելու համար, ինչը նրանց թույլ է տալիս հասնել բարձր պրոֆեսիոնալ մակարդակի և ստեղծել ազդեցիկ արվեստ: Հայաստանում երաժշտության պրոֆեսիոնալ մակարդակը հիմնված է հարուստ մշակութային ժառանգության, բարձրակարգ կրթական հաստատությունների վրա: Սակայն սահմանափակ ֆինանսական և տեխնոլոգիական ռեսուրսները դժվարացնում են երաժիշտների պրոֆեսիոնալ զարգացումը և միջազգային հաջողությունների հասնելը»:

Հասարակական լայն գործունեության հետ մեկտեղ կոմպոզիտորը ծավալում է նաև մանկավարժական գործունեություն. 2023-ից առ այսօր աշխատում է ԱՄՆ-ի Գլենդել քաղաքի Միջազգային երաժշտական դպրոցում՝ (այժմ «Կրեսչենդո») որպես տեսական առարկաների և կոմպոզիցիայի ուսուցչուհի, ինչպես նաև գրում է երգեր դպրոցի երգչախմբի համար: Հատկապես կարևորելով կրթության դերը, նա նշել է. *«Իմ նպատակն է բարելավել ընդհանուր կրթական համակարգը, որպեսզի յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա ստանալու որակյալ կրթություն, որը ներառում է նաև արվեստի և երաժշտության ուսուցումը: Եթե երաժշտությունն ավելի խորը ինտեգրվի կրթական ծրագրերում, դա կօգնի ձևավորել մի սերունդ, որը կլինի ավելի ստեղծագործ, կարեկցող և համախմբված»:*

Հասմիկ Հարությունյանի՝ թե՛ կոմպոզիտորական, թե՛ մանկավարժական, և թե՛ հասարակական գործունեությունն Սփյուռքում իսկապես արժանի է գովասանքի, քանի որ այն արժեքավոր ներդրում է ինչպես հայկական երաժշտական արվեստի զարգացման ու տարածման ասպարեզում, այնպես էլ մշակութային միջազգային կապերի խթանման, հաստատման և ամրապնդման գործում:

Գնահատելով կոմպոզիտորի ստեղծագործական ուրույն մոտեցումները, որոնք հատուկ են թե՛ ավանդական դասական ակադեմիական, և թե՛ ժամանակակից երաժշտարվեստին, պայմանավորված են ազգայինի պահպանման միտումով: Այդ առումով նշենք Հասմիկ Հարությունյանի խոսքը, ով 2007 թ. իր դիպլոմային աշխատանքի ներկայացման առիթով հայտնել է. *«Երաժշտությունը լսելիս անպայման պետք է հասկանաս, թե հեղինակն ով է, ինչ ազգության է պատկանում: Թվում է, որ ինձ մոտ դա հաջողվել է: Ստեղծագործությունս կոչվում է «Underground», այսինքն՝ ոչ թե գետնի տակ, ընդհատակ իմաստով, այլ այն, որ ամեն ինչի արմատները խորանում են դեպի ներքև, հողի մեջ, դեպի ազգայինը: Միշտ պետք է հիշենք, որ մենք արմատներով հայ ենք, ուր էլ գնանք, ինչ էլ անենք»:* Կարծում ենք, որ երիտասարդ կոմպոզիտորն ապրելով և ստեղծագործելով ԱՄՆ-ում, իսկապես կարողացել է մշակութային բազմազանության մթնոլորտում պահպանել ազգայինը, մաքուրը և խորքայինը:

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Երաժշտագետ, կոմպոզիտոր, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

Յուրի Դավթյանի ծննդյան 95-ամյակին նվիրված համերգ

1

Հուլիսի 15-ին, Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ համերգ-շնորհանդես նվիրված անվանի դիրիժոր, հայկական երաժշտական մշակույթի վաստակաշատ երախտավոր՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Յուրի Դավթյանի ծննդյան 95-ամյակին:

Յուրի Դավթյանը շուրջ 70 տարի եղել է Երևանի Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի դիրիժոր, որից 20 տարի գլխավոր դիրիժոր: 1966-1968 և 1992-1994 թվականներին եղել է՝ Հայկական հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր: Կյանքի վերջին տարիներին Յուրի Դավթյանը գործել և եռանդուն մասնակցություն է ունեցել Հակոբ Պարոնյանի անվան կոմեդիայի թատրոնում, որպես գլխավոր դիրիժոր: Նա ղեկավարել է մի շարք սիմֆոնիկ նվագախմբեր՝ ԽՍՀՄ Պետական, Մոսկվայի Մեծ, Մարիինյան նաև Սարատովի օպերային (գլխավոր դիրիժոր) թատրոնների, և այլ նվագախմբեր: Յուրի Դավթյանը համերգներով շրջագայել է՝ Ռումինիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում և այլ երկրներում:

Իր բազմամյա դիրիժորական գործունեությամբ Յուրի Դավթյանը մեծապես նպաստել է մեր ազգային ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբային արվեստի զարգացմանը և Հայաստանի մշակութային կյանքի հարստացմանը:

Նա որպես երաժիշտ և դիրիժոր կայացել է սովորելով ժամանակի մեծանուն դիրիժորների Կոնստանտին Սարաջևի և Միքայել Թավրիզյանի ու մեծերի կողքին՝ Ալեքսանդր Մելիք-Փաշայանի, Գևորգ Բուդաղյանի և հետագայում արդեն պրոֆեսոր, տասնամյակներ շարունակ այդ մեծերի մասնագիտական պատգամները փոխանցել է երիտասարդ սերնդին: Բախտավորություն է նրա սաների համար, որովհետև բացի ռուսական դիրիժորական դպրոցի կրողներից ուսանելով, նա կատարելագործվել է ֆրանսիական և իտալական դպրոցների ներկայացուցիչ ազնվական ծագումով մեծն Իգոր Մակեևիչի վերապատրաստման դասընթացում:

«Ես իմ ամբողջ կյանքը նվիրել եմ արվեստին: Իմ մեծերից Սարաջևից և Թավրիզյանից ստացած գիտելիքները, որպես գործունեության և կյանքի նպատակ փոխանցել եմ սաներիս, որոնք այսօր Սինգապուրից մինչև Փարիզ գործում են և կայացած, ճանաչված արվեստագետներ են». Յուրի Դավթյան:

Նրա դերը նշանակալի է ոչ միայն իր լավագույն շրջանավարտ Սերգեյ Սմբատյանի՝ որպես դիրիժորի մասնագիտացման գործում, այլ նաև Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի: Պետք է նշել Յուրի Դավթյանի մասնակցությունը որպես հանձնախմբի նախագահի Արամ Խաչատրյանի անվան միջազգային դիրիժորական մրցույթում՝ 2016 թվականին, որը կազմակերպել էր 20-ամյա պատմություն ունեցող աշխարհաճանաչ միջազգային մրցույթի հիմանդիր Սերգեյ Սմբատյանն, ում աջակցությամբ էլ հրատարակվել է իր ուսուցչի ինքնակենսագրական «Մեկ դարյա պատմություն» պատկերազարդ ալբոմ-գիրքը, որի ազդանշանային օրինակը ցուցադրվեց բեմից:

«Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 20 տարվա հրապարակչությունն եմ հիմնադրել և ղեկավարում, առաջին անգամ էր, որ կապակցերով ու հումորով ինքնակենսագրական այսպիսի հետաքրքիր գիրք եմ հրատարակել: Այդ միջոցով ժամանակի պատկառելի բարեկիրթ անձանց, արվեստի ու մարդկային շփումների հետ ենք ծանոթանում: Ժամանակաշրջան է վերականգնում հուշ-հումոր-պատումներով: Սթիթը եղավ, երբ Յուրի Դավթյանը տեսնելով Ղազարոս Սարյանին նվիրված. «Երաժշտական Հայաստան» ամսագիրն ասաց. «ես լավ հումորային հուշեր ունեմ, կիրատարակե՞ք» մենք խմբագիրներով լինելով նախկին ռադիոյականներ, ճանաչելով մաեստրոյի սուր և անմեղ տեսքով ճշմարտությունը համեստորեն շարադրելու ոճն ուրախությամբ ընդունցինք: Հետո էլ ոգևորված հոդվածի հաջողությամբ հարցրեցի. «էլի ունեք գրված նման հուշեր», – դրական պատասխան եղավ և սկսվեց գործընթացը». – գրում եմ ես, որպես գրքի կազմող և պատասխանատու մասնագիտական խմբագիր նաև երաժշտագետ և հրատարակիչ: Ամբողջ երեկոյի ընթացքում բեմի մեծադիր էկրանին ցուցադրվեցին գրքում ներառված պատկերազարդ էջերից Յուրի Դավթյանի հետ լուսանկարները:

Համերգը երախտագիտության և հարգանքի տուրք է նվագախմբի մեծ բարեկամի՝ Յուրի Դավթյանի հիշատակին, որին իրենց կատարումներով և ստեղծագործական հուշերով, մասնակցեցին անվանի կատարողներ, դիրիժորներ և կոմպոզիտորներ: Հնչեց Պիե՛տրո Մասկա՛նյիի Ինտերմեձոն «Գեղջկական պատիվ» օպերայից, դիրիժոր՝ ՀՀ վաստակավոր գործիչ Սերգեյ Սմբատյան:

Յուրի Դավթյանի որդին ջութակահար և դիրիժոր Հայկ Դավթյանը ժամանել էր Փարիզից հատուկ այս երեկոյին մասնակցելու համար: Իր կրթությունն սկսել է Տատյանա Հայրապետյանի ջութակի դասարանում՝ Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոցում և շարունակել իր իսկ ուսուցչուհու սան՝ Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայի, Էդուարդ Թադևոսյանի դասարանում: Որպես դիրիժոր ԵՊԿ-ն ավարտելուց հետո Ղ. Սարյանի խորհրդով ընդհունվել Յուրի Դավթյանի դիրիժորական դասարանը: Գործում է որպես ջութակահար մենակատար և նվագախմբի արտիստ տարբեր նվագախմբերում և Ֆրանսիայում նույնպես որպես կոնցերտմայստեր համագործակցել է տարբեր սիմֆոնիկ նվագախմբերի՝ Փարիզի ազգային Օպերայի և Ֆիլհարմոնիայի: Ստեղծել է կոմպոզիտոր Արթուր Սահարոնյանի հետ (ջութակ/դաշնամուր) «Քրոմա» դուետը, «Նաիրի» կվինտետը և նույնանուն նվագախումբը: Համերգին նա կատարեց՝ Մորիս Ռավելի «Գնչուհի» կոնցերտ-ռապսոդիան ջութակի և նվագախմբի համար:

Յուրի Դավթյանի ամենասիրելի երկերից մեկը՝ Էվարդ Միրզոյանի «Վալսը», որը ղեկավարեց որդին՝ Հայկ Դավթյանը: Նա կատարեց նաև Ալեքսանդր Սպենդիարյանի «Էտյուդը հրեական թեմաներով»:

Այսօր երիտասարդ՝ համաշխարհային ճանաչված օպերային աստղ Լիպարիտ Ավետիսյանը համերգի ընթացքում կատարեց հայ կոմպոզիտորների սիրված երգեր և այսօր էլ զանազան բեմերից հնչող՝ Առնո Բաբաջանյանի «Առաջին սիրո երգը» և նաև փայլուն կատարեց Կոնստանտին Պետրոսյանի ժողովրդականություն վայելող «Հայաստան» երգը, դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան:

Ավետյանա Նավասարդյան, Սերգեյ Սմբատյան

Յուրի Դավթյանը իր երկարատև կյանքի ընթացքում տարբեր ժամանակների աշխարհահռչակ արտիստների հետ է համագործակցել, ինչպես՝ Կարպիս Զորիանը, ռումինուհի՝ Ջինադա Պալլին, Մետրոպոլիտենի օպերային երգիչ՝ Նիկոլայե Հեռլեան, էստոնացի՝ Տիյտ Կո՛ուզիկ, Նատալյա Շպիլլերը, Ելենա Օբրազցովան, մեր լավագույն կատարողներից՝ Գոհար Գասպարյանը, Տաթևիկ Սազանդարյանը... կարելի է անվերջ թվարկել, նաև այսօրվա երիտասարդ շատ երգիչներ:

Սպասված հյուրերից էր աշխարհահռչակ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը, ով ուսանել է դիրիժորություն Յուրի Դավթյանի դասարանում և ի հիշատակ իր ուսուցչին Սվետլանա Նավասարդյանը կատարեց «Էլվիրա Մադիգան» վերնագրով հատվածը՝ Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի դաշնամուրի և նվագախմբի 21-րդ Կոնցերտից՝ Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

Շատ հետաքրքրական է կոմպոզիտորների հետ համագործակցությունը և բնական հումորային դրվագներով համեմված: Մեծ էր հատկապես բարեկամությունն Էդվարդ Միրզոյանի հետ, ում կողմից գրված են հետևյալ տողերը Յուրի Դավթյանի մասին. *«ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Յուրի Դավթյանը հանրապետության ականավոր դիրիժորներից է: Նրա բազմամյա արտեղծագործական գործունեությունը, որպես օպերային և սիմֆոնիկ դիրիժոր, մեծ ներդրում է Հայաստանի երաժշտական մշակույթի զարգացման գործում: Ալեքսանդր Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում առաջին անգամ իրականացրել է Վարդան Տիգրանյանի «Սոս և Վարդիթեր», Անդրեյ Բաբաևի «Արծվարերդ», Գևորգ Սրմենյանի «Խորտակում», Գրիգոր Հախինյանի «Կամո», Էրիկ Հարությունյանի «Մի կաթիկ մեղր», Վարդան Սմենյանի «Կիկոսի մահը» և այլ օպերաների առաջին բեմադրությունները...»:*

Յուրի Դավթյանի մասին այստեղ հատկապես կցանկանայի նշել նրա դերը հայ երաժշտության դասական Տ. Չուխաճյանի «Զեմիրե» օպերայի վերածնդի և առաջին ներկայացնելու հարցում (ձեռագիր նյութերի հիման վրա), որն ամուր հաստատվեց երաժշտական երկացանկում հեռուստահեռարձկման համար:

«Մելոդիա» ընկերության համար նա ձայնագրել է Ա. Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերան և «Ալմաստ» ֆիլմ-օպերան ըստ Սպենդիարյանի համանուն օպերայի:

Յուրի Դավթյանը Հակոբ Պարոնյանի անվան

7

ՎԵՏՔԵՐ

ՅՈՒԼԻՍ 21, 2024

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀԻՆ ՄԵՋ

ՀԱՄԵՐԳ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, ՊՐՈՖԵՍՈՐ

ԵՈՒՐԻ ԴԱՎԹԵԱՆԻ

ԾՆՆԴԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻՆ

15 Յուլիսին Արամ Խաչատրյանի անուան համերգասրահում տեղի ունեցավ համերգ՝ նուիրուած անուանի դիրիժոր, հայկական երաժշտական մշակոյթի վաստակաշատ երախտաւոր՝ ՀՀ ժողովրդական արտիստ, փրոֆէսոր Նորի Դաւթեանի ծննդեան 95-ամեակին: Նորի Դաւթեանը շուրջ 70 տարի եղել է Երեւանի Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնի դիրիժոր, ապա 20 տարի ժամանած է որպէս գլխաւոր դիրիժոր: 1966-1968 եւ 1992-1994 թուականներին՝ Հայկական հեռուստատեսութեան եւ ռատիոյի պետական կոմիտէի սիմֆոնիկ նուագախմբի գլխաւոր դիրիժորն էր: Կեանքի վերջին տարիներին Նորի Դաւթեանը գործել եւ եռանդուն մասնակցութիւն է ունեցել Հակոբ Պարոնեանի անուան կոմեդիայի թատրոնում, որպէս գլխաւոր

դիրիժոր: Նա ղեկավարել է մի շարք սիմֆոնիկ նուագախմբեր՝ ԽՍՀՄ Պետական, Մոսկուայի Մեծ, Մարիինեան նաեւ Սարատովի օպերայի (գլխաւոր դիրիժոր) թատրոնների նուագախմբեր: Նորի Դաւթեանը համերգներով շրջագայել է Ռումինիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում եւ այլ երկրներում: Իր բազմամեայ դիրիժորական գործունէութեամբ նա մեծապէս նպաստել է մեր ազգային ակադեմիական սիմֆոնիկ նուագախմբային արուեստի զարգացմանը եւ Հայաստանի մշակութային կեանքի հարստացմանը: Բայցի ռուսական դիրիժորական դպրոցի կրողներից ուսանելով նա կատարելագործուել է ֆրանսիական եւ իտալական դպրոցների ներկայացուցիչ, ծագումով՝ ազնուական, մեծանուն Իգոր Մակեյեւիչի վերապատրաստման դասընթացքում:

Նշող դերը նշանակալի է ոչ միայն իր լաւագոյն շրջանաւարտ Սերգեյ Սմբատեանի՝ որպէս դիրիժորի մասնագիտացման գործում, այլ նաեւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախմբի: Նորի Դաւթեանի մասնակցութիւնը որպէս յանձնախմբի նախագահ՝ Արամ Խաչատրեանի անուան միջազգային դիրիժորական մրցոյթում՝ 2016 թուականին, որն կազմակերպել էր 20-ամեայ պատմութիւն ունեցող աշխարհահռչակ միջազգային մրցոյթի հիմնադիր Սերգեյ Սմբատեանը: Հանդիսը ելոյթներ եւ բարեմաղթներ էին Նորի Դաւթեանի յիշատակին, որին իրենց կատարումներով եւ ստեղծագործական յուշերով մասնակցեցին անուանի կատարողներ, դիրիժորներ եւ կոմպոզիտորներ: Յատուկ այդ օրուայ համար Փարիզից եկել էր մասնակցելու որդին՝ յորակահար եւ դիրիժոր Հայկ Դաւթեանը, ով դիրիժորութիւն էր սորվել էր իր հայրիկի դասարանում: Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախմբի եւ դեղարուեստական ղեկավար՝ ՀՀ վաստակաւոր գործիչ Սերգեյ Սմբատեանը հրաւիրել էր մասնակցելու անուանի կատարողների եւ մեր ազգի ականաւոր ներկայացուցիչների ներկայութեամբ: Դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդեանին, դաշնակահարուհի Անահիտ Դիլբարեանին:

Գոհար Շագոյեան

Նշանաւոր Մասնագիտացման միջազգային ֆեստիվալի անդամ

ԿԱՅԱՑԱՎ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ՆԱՐԻՆԵ ԶԱՐԻՖՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ

Նարինե Զարիֆյան, Դանիել Դանիելյան, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, դիրիժոր Էդուարդ Թոփչյան

Հուլիսի 16-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում կայացավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, ԵՊԿ Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նարինե Զարիֆյանի հոբելյանական երեկոն:

Ծրագրում ընդգրկված էին՝ «Փողոցի արևային կողմում» (մենակատար՝ Նարեկ Ավագյան, ֆլեյտա), «Ներիր» (խոսք՝ Մարիաննա Գրիգորյանի, մենակատար՝ Սիրանուշ Գասպարյան), «Էլեգիա» (մենակատար՝ Հակոբ Ջաղացպանյան, կիթառ), «Վոկալիզ» (մենակատար՝ Սոնա Շահգելդյան), «Մեր սիրո աշունը» (մենակատար՝ Ռուբեն Հախվերդյան), «Կեսգիշեր» (մենակատար՝ Ռուբեն Հախվերդյան), «Ֆանտազիա Սայաթ-Նովայի թեմաներով» (մենակատարներ՝ Հակոբ Խալաթյան (քամանչա), Աստղիկ Մնեցունց (քանոն), Կարեն Գևորգյան (դհոլ)), *«Solea»* (մենակատարներ՝ Սիրանուշ Գասպարյան (վոկալ), Կարմեն Թոսունյան (ջութակ), Հակոբ Ջաղացպանյան (կիթառ) Դավիթ Մելքոնյան (սաքսաֆոն)), «Քեզ հետ, քեզնով», խոսք՝ Մարիաննա Գրիգորյանի (մեներգիչներ՝ Սոնա Շահգելդյան, Գառնիկ Եղիազարյան, Հակոբ Ջաղացպանյան (կիթառ)), *«Umore da Rapsodia»* (մենակատար՝ Անահիտ Դիլբարյան (դաշնամուր)), «Երկխոսություն» մանկական երգչախմբի և հարվածային գործիքների համար, (նվագակցող՝ Նաիրա Հարությունյան) ստեղծագործությունները: Համերգին մասնակցում էին նաև՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյան, Զայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոցի երգչախումբը, գեղարվեստական ղեկավար՝ Կարինե Առաքելյան, խմբավար՝ Էմմա Առաքելյան, և հարվածային գործիքների կազմը, դիրիժոր՝ Ռուբեն Ասատրյան:

Նարինե Զարիֆյան, Արամ Սաթյան

Նարինե Զարիֆյան, Կարլ Մանուկյան

Համերգային երեկոյի ընթացքում, որը վարում էր երաժշտագետ Մարգարիտա Բաղդասարյանը, Նարինե Զարիֆյանին Գիտության Արվեստի Մշակույթի Միջազգային Ակադեմիայի կողմից շնորհվել է ակադեմիայի Պատվավոր անդամի բարձրագույն կոչում, նույն ակադեմիայի կողմից պարգևատրվել՝ «Ոսկե Մեդալ»-ով, Հայաստանի Կոմպոզիտորների Միության կողմից՝ Իսկության Հավաստագրով, ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից, մշակույթի բնագավառում ունեցած վաստակի, երկարամյա աշխատանքի և ստեղծագործական նվաճումների համար՝ Պատվոգրով և «Հայք» Ռազմամշակութային Միության Մեդալով:

Շնորհավորական ուղերձով հանդես եկավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատար, Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ծովինար Մովսիսյանը. *«Հարգելի տիկին Զարիֆյան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի և ռեկտորատի անունից շնորհավորում ենք Ձեզ՝ ստեղծագործական գործունեության 40-ամյակի կապակցությամբ:*

Դուք Ձեր կարևոր ներդրումն եք ունեցել Երևանի կոնսերվատորիայի Ջազ-փոփ երաժշտության ամբիոնի ստեղծման և մասնագիտական կայացման գործում: Ստեղծման առաջին իսկ օրերից, ամբիոնի հիմնադիրների՝ այս ոլորտում հիրավի լեգենդների հետ կողք-կողքի, ստեղծել եք ամենաերիտասարդ, բայց և ամենահանրային ամբիոնի ապաղձն ու բովանդակությունը: Վերջին տարիներին, ստանձնելով ամբիոնի ղեկավարի բարդ ու պատասխանատու պարտականությունները, Դուք կարողացաք նոր շունչ ու մասնագիտական նոր որակ հաղորդել ամբիոնին՝ շեշտը դնելով համաշխարհային ջազի դասական և ոլորտի ազգային դրսևորումների լավագույն նմուշների յուրացման վրա:

Մեծագույն հաճույքով և հիացումով ենք ունկնդրում ամբիոնի պարբերաբար ներկայացվող ծրագրերը՝ բազմաոճ և բազմաբովանդակ գործիքային ու վոկալ անսամբլայնության զարմանալի ներդաշնակությամբ, կենդանի կատարումներով:

Այդ ձեռքբերումներն ակնհայտ են և բոլորովին պատահական չեն, քանի որ Դուք Ձեր ստեղծագործական գործունեության ընթացքում մշտապես զուգակցում եք Ձեր ուսուցիչներից ժառանգած բարձր պրոֆեսիոնալ հմտություններն ու ժամանակի շունչը արդիական համարձակ միջոցներով արտահայտելու կարողությունը:

Շնորհավորելով Ձեր ստեղծագործական գործունեության 40-ամյակի առթիվ՝ մաղթում ենք անհատնում ոգեշնչում, առանդ և նորանոր հաջողություններ»:

Նյութը պատրաստեց՝
ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

Յուրի Դավթյանի ծննդյան 95-ամյակին նվիրված համերգ

կոմեդիայի թատրոնում աշխատել է որպես գլխավոր դիրիժոր: Բեմադրել է Տ. Զուխաճյանի «Կարինե» օպերետտը, ինչպես նաև Արամ Սաթյանի «Մորգանի Խնամին» մյուզիքլը, որն արժանացել է «Արտավազդ» մրցանակի:

Համերգին կատարվեց Կոնստատին Պետրոսյանի հանրահայտ երգերից՝ «Հայաստանը»: Ի լրումն ասենք, որ բոլորովին վերջերս Արամ Խաչատրյանի տուն թանգարանում շնորհանդես-համերգ տեղի ունեցավ Կոնստատին Պետրոսյանի Ռոմանսների և երգերի ժողովածուի կազմակերպված Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի դասախոս Շուշանիկ Բրուտյանի ջանքերով, որը հաջող փորձ էր ծանոթացնելու ռոմանոսցիներին կոմպոզիտորի արվեստի հետ:

Համերգը եզրափակվեց այն երկով, որը վերջին փոխադրումն էր, որի վրա Յուրի Դավթյանը երկար տարիներ աշխատել և վերաձել էր դաշնամուրի և նվագախմբի համար Սյուիտի՝ Արտեմի Այվազյանի երգերի մոտիվներով: Ի դեպ, այս ստեղծագործությունը նվագախումբն առաջին անգամ հանրությանը ներկայացրել է 2019 թվականին՝ դիրիժորի ծննդյան 90-ամյակին նվիրված համերգին՝ հենց Յուրի Դավթյանի ղեկավարությամբ: Անահիտ Դիլբարյանը կատարեց Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
ԵՊԿ հրապարակչության՝ հիմնադիր-հրապարակիչ,երաժշտագետ, ՀԿՄ, ՀԺՄ, ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ

Կոնսպանտին Պետրոսյանի «Երգերի ընտրանի» գրքի համերգ-շնորհանդեսը

Կոնսպանտին Պետրոսյան, Շուշանիկ Բրուտյան

1 Հունիսի 3-ին, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կայացավ անվանի կոմպոզիտոր, «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանակիր, «Մովսես Խորենացի» մեդալակիր, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Կոնստանտին Պետրոսյանի նոր «Երգերի ընտրանի» ժողովածուի համերգ-շնորհանդեսը:

«Ժողովածուն ընդգրկում է կոմպոզիտորի տարբեր ժանրերում և տարբեր ժամանակաշրջաններում գրված երգերը՝ ձայնի և դաշնամուրի նվագակցությամբ: «Երգերի ընտրանին» վաղուց ապապված ձեռնարկ է երաժշտական ուսումնական հաստատություններում և հրաշալի հնարավորություն սրոֆեսիոնալ երգիչ-կատարողների համար՝ ընդլայնելու սեփական երգացանկը», – ասել է հրատարակման նախաձեռնող, ժողովածուի կազմող և երաժշտական խմբագիր, համերգ-շնորհանդեսի կազմակերպիչ, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի դասախոս Շուշանիկ Բրուտյանը:

Համերգին մասնակցում էին քոլեջի սաները՝ կատարելով ժողովածուի մեջ ընդգրկված բոլոր ստեղծագործությունները: *««Երգերի ընտրանի»-ն ընդգրկում է բազմաբնույթ երգեր՝ հայրենասիրական, քնարական, նույնիսկ մանկապատանեական, որոնց հիմքում հայ բանաստեղծների ստեղծագործություններն են: Կան առաջին անգամ հրապարակվող երգեր, նաև երգեր հոգևոր թեմաներով»,*– ասել է կոմպոզիտոր Կոնստանտին Պետրոսյանը:

Որոշ երգերի կցված են QR կոդեր, որոնց հղումով կարելի է համացանցում դիտել կամ ունկնդրել տվյալ ստեղծագործությունների կատարումները:

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Յոհան Սեբաստիան Բախ «Սի մինոր մեսսա»: «Երկնայինը՝ երկրից երկինք»:

2024 թ., փետրվարի 22-ին, ՀՀ մայրաքաղաք Երևանում՝ Արամ Խաչատրյան համերգասրահում հնչեց Յ. Ս. Բախի «Սի մինոր մեսսան», որն առաջին անգամ էր կատարվում Հայաստանում: Դիրիժորն էր՝ Ֆրից Կրեմերը (Գերմանիա), մենակատարներն էին. Յոհոնա Վինքել (սոպրանո, Գերմանիա), Սեդա Ամիր-Կարայան (կոնտրալտո, Գերմանիա), Բենեդիքթ Հայմես (տենոր, Միացյալ Թագավորություն) և Փիթեյ Հարվեյ (բաս, Միացյալ Թագավորություն):

Մասնակցում էին՝ Հայաստանի պետական կամերային նվագախումբը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան, Հայաստանի պետական կամերային երգչախումբը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Ռոբերտ Մլքեյան, և Երևանի պետական կամերային երգչախումբը, գեղարվեստական ղեկավար և խմբավար՝ Քրիստինա Ոսկանյան:

Երեկոն հնարավոր եղավ իրականացնել Վաչե և Թամար Մանուկեան բարեգործական միության հովանավորությամբ, որոնք, ի դեպ, Հայաստանի պետական կամերային նվագախմբի և երգչախմբի վաղեմի բարեկամներն են:

Դահլիճը լեցուն էր բազմությամբ: Ներկա էին հոգևոր դասի ներկայացուցիչներ, մեծանուն երաժիշտներ, բարձրաստիճան պաշտոնյաներ և արվեստը գնահատող, ընկալող մարդիկ:

Երեկոյի ամբողջ ընթացքում դահլիճում հոգևոր մթնոլորտ էր տիրում:

– «Ինձ համար մեծ պատասխանատվություն է Յ. Ս. Բախի այս հանճարեղ ստեղծագործությունը՝ «Սի մինոր մեսսան» ղեկավարել առաջին քրիստոնյա երկրում, որպես սրեմիերա», – երեկոյի սկզբին իր բովանդակալից խոսքում նշեց Ֆրից Կրեմերը:

Բախի վոկալ-գործիքային ստեղծագործություններն իր ստեղծագործական ժառանգության մեջ նշանակալի դեր ունեն: Գրել է 300 կանտատ՝ որոնցից 270-ը՝ հոգևոր, 30-ը՝ աշխարհիկ բնույթի:

Բախի հոգևոր և աշխարհիկ կանտատներն իրենց երաժշտամտածողական արմատներով հարազատ են միմյանց: Նա հաճախ աշխարհիկ կանտատների որոշ հատվածներ օգտագործում է հոգևոր կանտատներում՝ փոփոխելով միայն տեքստը:

Բախի վոկալ-գործիքային ստեղծագործություններում կենտրոնական տեղ են զբաղեցնում «Պասսիոնները»՝ («Չարչարանքները»): Դրանք չորսն են՝ հիմնված չորս ավետարանիչների տեքստերի վրա՝ ըստ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի: Այդ ստեղծագործությունները պատմում են Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի կյանքի մասին: Սրանք թե՛ մտահղացմամբ, և թե՛ ծավալով ամենախոշոր ստեղծագործություններն են:

Իսկ «Սի մինոր մեսսան» բարձրագույն և առանձնակի տեղ է գրավում, քանի որ այն պատարագի ծեսն է, և առանձնահատուկ խորհրդանշական իմաստ ունի: Այն բավականին խորը, փիլիսոփայական, վեհ գաղափարների, ճշմարտության արտահայտման միջոց է: Բախին հաջողվել է այս ստեղծագործության մեջ դուրս գալ զուտ ծիսական և հուզական ոլորտներից և ներառել այլ ոլորտ՝ անտեսանելին, անշոշափելին, ոչ մարմնականը:

Հատկանշական է այն, որ Բախի հոգևոր ստեղծագործությունները հիմնականում ընդգրկում էին լյութերական եկեղեցու ավետարանական տեքստերն ու աղոթքները, իսկ այս ստեղծագործությունը գրված է, որպես կաթոլիկ մեսսա (Սաքսոնյան կյուրֆուրստ Ֆրիդրիխ Ավգուստի պատվերով):

Համերգի ընթացքում ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ ծրագրում ավանդական հինգ մասերի փոխարեն նշված էին հետևյալ չորս մասերի ենթաբաժինները.

1. Missa (Kyrie and Gloria):
2. Symbolum Nicenum (Credo):
3. Sanctus:
4. Osanna, Benedictus, Agnus Dei et Dona nobis pacem:

Սակայն ընդունված է, որ համերգային կատարումներում երբեմն դուրս են մնում որոշ հատվածներ, այս դեպքում՝ նաև որոշ կամայական տեղափոխումներ էին կատարվել համարների հաջորդականության մեջ:

Կատարումը կարող էր նաև ավելի գոհացնող լինել: Մասամբ բացակայում էր այն ուժը, որի շնորհիվ հանդիսականը պետք է շնչեր և ապրեր նույն բաբախյունով: Ցավոք, միշտ չէր, որ դա հաջողվում էր:

Հաշվի առնելով, որ այն բավականին լուրջ և կատարման իմաստով բարդագույն ստեղծագործություն է, և ստանձնել այդ կատարումը ահռելի պատասխանատվություն է, հասկանալի են որոշ «թերությունների» պատճառները:

Գուցե այդ հանգամանքով է, որ մենակատարների ելույթներում միջին ռեգիստրներում ձայնը հնչում էր գեղեցիկ, մաքուր, իսկ ծայրի ձայնասահմաններում՝ կատարողական առումով բարդ հատվածներում երբեմն ձայնը չէր հաղթահարում տվյալ պարտիան:

Երգչախումբը փորձում էր հնարավորինս լավ կատարել՝ յուրաքանչյուրը իր ձայնաբաժինը, սակայն, մասամբ բացակայում էր յուրաքանչյուր ձայնի ինքնուրույն մեղեդիական գծի ցուցադրումը և միաժամանակ բոլոր ձայների միասնականությունը՝ որպես մեկ շունչ:

Նվագախումբը հնչում էր բավականին մեղմ, զգույշ, սակայն, որպես մեսսա՝ էլեկտրոնային դաշնամուրի փոխարեն կարող էր հնչել երգեհոն:

Երբեմն նկատելի էր նվագախմբի և երգչախմբի անսամբլային անհամապատասխանություն:

Դիրիժորը բավականին ոգևորված էր, ինչը ողջունելի է, սակայն մասնագիտական առումով, ի վերջո, կատարման

Սեդա Ամիր-Կարայան, Ֆրից Կրեմեր

թերությունների ճնշող մասը կախված է դիրիժորից:

Այնուամենայնիվ, համերգը կարող ենք համարել հաջողված:

Այս ստեղծագործության ցանկացած կատարում կարևորագույն իրադարձություն է այն երկրի, քաղաքի համար, որտեղ այն հնչում է: Մեր դեպքում՝ առավել ևս, քանի որ այն առաջին անգամ էր հնչում Հայաստանում՝ պարգևելով հնարավորություն՝ լսելու բարձրարժեք ստեղծագործություն, որը կարելի է բնութագրել. *«Երկնայինը՝ երկրից երկինք»:*

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՋԱՆՅԱՆ,
ԵՊԿ երաժշտագիտության բաժնի 2-րդ կուրս

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՔՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԻԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝
ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 28.08. 2024:
Գինը 400 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (http://yksclabrary.am/conservatory.am): Այլ ՁԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (http://yksclabrary.am/conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclabrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/